ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 144

«25» 12 2020 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 6 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության ընթացքում առաջացող փաստաթղթերի պահպանման ժամկետների նշումով ցանկում համապատասխան փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2012 թվականի մարտի 2-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության ընթացքում առաջացող փաստաթղթերի պահպանման ժամկետների նշումով ցանկը հաստատելու մասին» N 6 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ցանկի 8-րդ, 9-րդ և 22-րդ կետերի 3-րդ սյունակում «5 տ.» և 21-րդ կետի 3-րդ սյունակում «1 տ.» բառերը փոխարինել «10 տ.» բառերով.

2) Հրամանին կից «Հիմնադրույթներ»-ի 11-րդ կետում «առնվազն 3 տարի» բառերից հետո լրացնել «(բացառությամբ՝ ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչությունում պահպանվող փաստաղթերի, որոնք ՀՀ դատախազության արխիվի բաժին կարող են հանձնվել տվյալ վարչությունում դրանց անհրաժեշտությունը վերանալիս, իսկ ոչնչացվում կամ մշտական պահպանության համար հանձնվում են 10 տարի ՀՀ դատախազության արխիվի բաժնում պահպանվելուց հետո)» բառերը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ